

**ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի շահագործման
Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության
վերլուծություն**

1. Ներածություն

Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզում, Մեղրի գետի միջին հոսանքի աջ ափում, Վարդանաձոր գյուղից 4կմ դեպի հյուսիս-արևմուտք, Երևան-Մեղրի-Իրան ավտոմայրուղուց 2.5կմ և Մեղրի երկաթգծի կայարանից 20 կմ հեռավորության վրա: Հանքավայրը տեղադրված է Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան հատվածի 1200-1700մ բացարձակ բարձրությունների վրա:

Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի շահագործումը ներկայումս իրականացնում է «ՄԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ն, համաձայն հանքի ստորգետնյա շահագործման նախագծի: Լեռնաերկրաբանական պայմաններից ելնելով՝ Լիճքվազ-Թեյի ոսկի-բազմամետաղային հանքավայրի հանքաքարի արդյունահանումը առաջին փուլում նախատեսված է իրականացնել ստորերկրյա եղանակով՝ տարեկան մոտ 150-200 300 հազ. Տոննա, երկրորդ փուլում մինչև 300 հազ. Տոննա, ապրանքային հանքաքար արտադրողականությամբ:

Նախագծի բնապահպանական փորձաքննության համար 2011 թվականին «ՄԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ի կողմից ներկայացվել է ՀՀ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն [1]: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից (թիվ 118, 08.12.2011) «ՄԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ին տրվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն [2]:

ՇՄԱԳ-հաշվետվություննում բերված են հանքավայրի գոտու էկոլոգիական վիճակի ընդհանուր, շատ սեղմ նկարագրությունը, հանքավայրի ստորերկրյա շահագործման ծրագրի ընդհանուր նկարագիրը, հանքի շահագործման ազդեցության որոշ հնարավոր հետևանքներ, անհրաժեշտ բնապահպանական միջոցառումները՝ ուղղված շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության նվազեցմանը և բացառմանը:

Մասնավորապես ներկայացված են մի շարք միջոցառումներ, որոնց նպատակն է հնարավորինս մեղմացնել, նվազեցնել կամ կանխարգելել հանքի շահագործման արդյունքում ակնկալվող բնապահպանական բացասական ազդեցությունները: Օրինակ նախատեսվում է հանքախուցերի մշակումից հետո դատարկությունների լցնումը դատարկ ապարներով (մինչև 81%), ջրօգտագործումը իրականացնել շրջանառու համակարգով՝ բացառելով աղտոտված ջրերի արտահոսքը շրջակա

միջավայր, ռեկուլտիվացնել լցոնակույտերը՝ դրանց վրա ստեղծելով բուսական ծածկույթ, և այլն:

2. ՇՄԱԳ-ի թերությունները

Շրջակա միջավայրի առկա իրավիճակի, միջավայրի վրա ազդեցությունների գնահատումների և կանխատեսումների թերությունները, որոնք առկա են ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության մեջ:

Ջրային ռեսուրսներ

ՇՄԱԳ հաշվետվության մեջ գետավազանի մակերևութային ջրերի հիդրոկենսաբանական և հիդրոմորֆոլոգիական հետազոտություններ ներկայացված չեն: Գետավազանի հիդրոմորֆոլոգիական վիճակի և հիդրոկենսաբանական որակի վերաբերյալ տվյալներ ու գնահատականներ չկան:

Գետավազանի մակերևութային ջրերի հատակային նստվածքների քիմիական կազմի, հատակային ֆլորային, ֆաունայի, հատկապես ջրերի որակի հիմնական բնութագրիչ հանդիսացող հատակային մակրոանոդնաշարավորների տեսակային կազմի ուսումնասիրություններ Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մեջ, ընդհանրապես ներկայացված չէ:

Ընդհանուր արմամբ մակերևութային ջրերի վիճակի գնահատման տեսանկյունից կազմված է խիստ թերի:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումը հանքավայրի շահագործման ընթացքում

Օդային ավազան բաժնում հայտնի մեթոդների օգտագործմամբ հաշվարկված և ներկայացված են փոշու և այլ աղտոտիչների արտանետումների հաշվարկները, համաձայն որոնց տարածումը սահմանափակ է և շրջակա միջավայրի վրա էական բացասական ազդեցություն չի ունենա: Սակայն հողմնահարման միջոցով հանքավայրի դատարկ ապարների լցակույտերից փոշու մեծ շառավղով տարածման հնարավորությունը չի քննարկվել և գնահատում չի իրականացվել: Իսկ լցակույտերից հողմնահարման միջոցով հանքավայրերի տարածքից փոշու տարածումը ավելի լայն շրջագծով հայտնի է և դիտվում է ՀՀ տարածքի մի շարք հանքավայրերում: Օրինակ, Սոթքի, Ագարակի հանքավայրերի տարածքից փոշին հողմնահարման միջոցով տարածվում է մեծ շառավղով՝ հանգեցնելով հարակից տարածքների բուսականության, մակերևութային ջրերի և ջրերի հատակային նստվածքների աղտոտմանը ծանր մետաղներով և թունավոր տարրերով:

Ջրային ռեսուրսներ

Ըստ հաշվետվության տեխնիկական/արտադրական ջրի օգտագործումը (փոշենստեցում, ապարների խոնավացում), հիմնականում հանդիսանում է անվերադարձ ջրօգտագործում: Հանքաջրերի համար նախատեսված են մեխանիկական և քիմիական մաքրում, իսկ դեպի բաց գետավազան նախատեսվում է արտանետել

միայն մաքրված ջրեր, տես [1]: Համաձայն ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության Մեղրիգետի ավազանի ջրերի աղտոտում տեղի չպետք է ունենա:

Սակայն արդեն ներկայումս, հանքի շահագործման և հանքավայրի տարածքում ռեկուլտիվացիոն և բնապահպանական միջոցառումներ չիրականացնելու հետևանքով, Մեղրիգետի ջրերը հանքավայրից ներքև աղտոտված են: Ըստ ջրաքիմիական մոնիտորինգային տվյալների, Մեղրիգետի թխկուտ գյուղից ներքև ընկած հատվածում ամռան ամիսներին ջրի որակը լավ (II) դասից նվազում է մինչև վատ (V) որակի դասը [3]:

Մեղրիգետ գետը՝ Թխկուտ և Վարդանիձոր բնակավայրի միջև, Լիճքվազ-Թեյի հանքավայրից ներքև, հանդիսանում է ռիսկային ջրային մարմին, (ՌՋՄ-25. առանձնացվել է Լիճքվազ-Թեյի, Այգեձորի և Տերտերասարի հանքավայրերի տարածքներում ձևավորված մակերևութային հոսքաջրերի և հանքարդյունաբերական թափոնների կուտակումներից (լցակույտեր) առաջացած հետադարձ ջրահոսքերի ճնշման հետևանքով: ՌՋՄ-ի ընդհանուր երկարությունը 2,6 կմ է, տես [4]):

Լանդշաֆտ և ռեկուլտիվացիա

«Լիճքվազ-Թեյի» ոսկու բազմամետաղային հանքավայրի մոտ 1,2 հա տարածքի վրա գտնվում են բազմաթիվ լցակույտեր: Չնայած «Սագամար» ՓԲԸ-ի ներկայացրած ծրագրով, տես ՇՄԱԳ ([1]), լցակույտերը պետք ենթարկվեին ռեկուլտիվացիայի և ծածկվեին բուսական շերտով: Սակայն նշված աշխատանքները փաստացի չեն իրականացվում: Ներկայումս նշված լցակույտերը գտնվում են բաց վիճակում և անմիջական ազդեցություն են թողնում Մեղրիգետի ջրերի որակի վրա [3]: Գետի հորդացումների, ձնհալների և առատ տեղումների ժամանակ, գետի աջակողմյան ափին գտնվող հանքավայրի լցակույտերի և պարզարանների տարածքի լվացման արդյունքում ձևավորված մակերևութային հոսքերը, ներհոսելով Մեղրիգետ գետ, աղտոտում են այն ծանր մետաղներով և տոքսիկ տարրերով:

Մոնիտորինգի ծրագիր

Հանքավայրի շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների, օբյեկտների մոնիտորինգի ծրագիրը ներկայացված է ընդհանուր բնույթի թեզիսների ձևով: Մոնիտորինգի, մշտադիտարկման ծրագիր ՇՄԱԳ-ում փաստացի ներկայացված չէ: Շրջակա միջավայրի բաղադրիչների և օբյեկտների վրա հանքավայրի շահագործման ազդեցության էֆեկտների մոնիտորինգ, մշտադիտարկում ընդհանրապես նախատեսված չէ:

Միջազգային առաջավոր փորձ և ՀՀ միջազգային պարտավորություններ

ՇՄԱԳ-ում քննարկված և ներկայացված չեն միջազգային առաջավոր փորձի և ՀՀ միջազգային պարտավորություններից բխող շրջակա միջավայրի հետևյալ օբյեկտները, բնութագրերը և գնահատումները.

- Գյուղատնտեսական մշակաբույսերի վրա ազդեցությունները, որը անմիջականորեն կապված է սոցիալ տնտեսական և առողջապահական հիմնահարցերի հետ,
- Կլիմայի փոփոխության վրա ազդեցությունը,
- Կլիմայի գլոբալ փոփոխության հետևանքների ազդեցությունը
- Տարբեր գործոնների գումարային ազդեցությունը
- Էկոհամակարգային ծառայությունների վրա ազդեցությունը
- Էկոհամակարգային ծառայությունների նվազման հետևանքով տնտեսական և սոցիալական վնասների գնահատումը
- Տարբեր գործոնների գումարային ազդեցության գնահատումը:

Ամփոփում

ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի շահագործման ՇՄԱԳ հաշվետվության վերլուծությունը, տարածքում ռեկուլտիվացիայի չենթարկված լցակույտերի առկայությունը և Մեղրիգետի ջրերի հիդրոքիմիական վատ որակը ցույց են տալիս, որ.

- «Սագամար» ՓԲԸ-ի կողմից 2011 թվականին ներկայացված ու դրական փորձաքննական եզրակացություն ստացած ծրագրի ՇՄԱԳ-ում բերված կանխատեսումներն ու գնահատականները չեն համապատասխանում շրջակա միջավայրում դիտվող փաստացի իրավիճակին,
- ՇՄԱԳ-ով նախատեսված բնապահպանական միջոցառումներն իրականացվում են թերի կամ չեն իրականացվում ընդհանրապես, ինչն հանգեցրել է շրջակա միջավայրի՝ մասնավորապես Մեղրիգետի էկոհամակարգի աղտոտմանը և շրջապատի էկոլոգիական վիճակի վատացմանը:
- ՇՄԱԳ-ը այլևս չի համապատասխանում ՀՀ գործող օրենսդրության և միջազգային պարտավորություններից բխող ներկա պահանջներին:

Առաջարկություններ

- «Սագամար» ՓԲԸ-ին պետք է ժամանակ տրվի և պարտադրվի ՇՄԱԳ-ի լրամշակում կամ հանքավայրի շահագործումը պետք է դադարեցվի՝ նոր ՇՄԱԳ կազմելու և ներկայացնելու պահանջով:
- Անհրաժեշտ է ՇՄԱԳ-ը վերամշակել, համապատասխանեցնել ժամանակակից պահանջներին, գիտականորեն առավել հիմնավորված մեթոդներով իրականացնել հաշվարկներ ու վերլուծություններ գնահատումներ, կատարել ու կանխատեսումներ:
 - Պարտադրել «Սագամար» ՓԲԸ-ի հանձնառած բնապահպանական միջոցառումները ամբողջությամբ իրականացնելու համար:
 - Պարտադրել «Սագամար» ՓԲԸ-ին մշակելու և իրականացնելու բնապահպանական արդյունավետ համալիր միջոցառումները:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության մասին

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից (թիվ 118, 08.12.2011) «ՄԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ին տրվել է Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական դրական եզրակացություն [2]: Եզրակացության մեջ, որպես հիմնավորում կրճատ վերաշարադրված է ՇՄԱԳ հաշվետվության բովանդակությունը:

Եզրակացության մեջ «ՄԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ին ներկայացված է փորձաքննական 4 պահանջ: Առաջին երեք պահանջները՝ շինադրի հեռացման, ռեկուլտիվացիայի ՇՄԱԳ-ի մասերով հանդիսանում են գործող օրենսդրության պահանջներ և ոչ թե փորձաքննական: 4-րդ կետով «ՄԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ից պահանջվում է գործունեության երկրորդ փուլը սկսելուց առաջ ստանալ հատուկ լիցենզիա: Այս պահանջը, ըստ էության նույնպես օրենսդրության պահանջն է և վերահսկվում է պետության կողմից:

Իրականության մեջ փորձաքննություն, որպես այդպիսին չի իրականացվել, լրացուցիչ հետազոտություններ ու գնահատումներ, ներկայացված գնահատականների ու կանխատեսումների վերլուծություններ, ստուգիչ վերահաշվարկներ չեն իրականացվել: Եզրակացությունը տրվել է ֆորմալ մոտեցմամբ, դեկլարատիվ բնույթի շարժումային ձևակերպումներով:

Հղումներ

1. ՀՀ Սյունիքի մարզի Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի շահագործման Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, 2011թ.:
2. Լիճքվազ-Թեյի ոսկու հանքավայրի ստորգետնյա շահագործման աշխատանքային նախագծի վերաբերյալ «ՄԱԳԱՄԱՐ» ՓԲԸ-ին տրված (թիվ 118, 08.12.2011) Շրջակա միջավայրի վրա ազդեցության եզրակացություն. «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ, 08.12.2011:
3. ՀՀ ԲՆ «Շրջակա միջավայրի վրա ներգործության մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի Տարեկան և ամսեկան տեղեկանքներ. «Մակերևութային ջրերի և բնակավայրերի օդային ավազանի վիճակի մասին, 2014-2016», www.armmonitoring.am:
4. "Հարավային ջրավազանային տարածքի 2016-2021 թվականների կառավարման պլանը և արդյունավետ կառավարմանն ուղղված առաջնահերթ միջոցառումները հաստատելու մասին" ՀՀ կառավարության 26.05.2016թ. N 539 - ն որոշում և "2016-2021 թվականների միջոցառումների ծրագիր հարավային ջրավազանային տարածքի կառավարման պլանի" (Հավելված ՀՀ կառավարության 2016թ. մայիսի 26-ի նիստի N 20 արձանագրային որոշման):

Ս. Մինասյան

18.102016թ.